

[ 09.07.2007 ] «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԸ ԲԱՐՁՐ ՄՐՑԱՆԱԿ Է ՍՏԱՑԵԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ, 4 ՀՈՒԼԻՍԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Եվրոպական բիզնես ակադեմիայի Ազգային կոմիտեն (կենտրոնը գտնվում է Մեծ Բրիտանիայի Օքսֆորդի համալսարանում) «Սոկրատ» ("Socrates Intenational Award") միջազգային մրցանակ է շնորհել հայկական Գործնական հոգեբանության եւ սոցիոլոգիայի «Ուրարտու» մասնագիտացված համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Սեդրակ Սեդրակյանին: Այդ պատվավոր մրցանակին վերջինս արժանացել է մասնագիտական գործունեության եւ ժամանակակից հասարակության ինտելեկտուալ զարգացման մեջ ունեցած ծանրակշիռ ավանդի համար:

Ինչպես «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակցին հայտնեց համալսարանի ռեկտոր Սեդրակ Սեդրակյանը, ինքը հուլիսի 13-20-ը կմասնակցի Մալթայում կայանալիք «Մալթան բաց է համագործակցության համար» գիտաժողովին, ուր եւ անձամբ կստանա միջազգային այդ բարձրակարգ պարգևը: 2005թ.-ին Ս.Սեդրակյանն արժանացել էր մեկ այլ` Ժնևի որակի եւ մասնագիտական գործունեության միջազգային հիմնադրամի մրցանակի` ոսկե մեդալի:

1991 թվականից գործող «Ուրարտու» համալսարանը մասնագետներ է պատրաստում կլինիկական, իրավաբանական, սոցիալական աշխատանքի, տարիքային, մանկվարժական հոգեբանության ուղղություններով: Համալսարանն ունի նաեւ ասպիրանտուրա «հոգեբանություն» մասնագիտությամբ: